«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Մանկավարժական հոգեբանություն
ԱՌԱՐԿԱ	Ռուսաց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Գրետա Միխաիլյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Մահարու անվան հ.176հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1 4
Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը 4
1.1 Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը 4
1.2. Ուսումնական գործունեության առանձնահատկությունները 6
ԳԼՈՒԽ 2 10
Ավագ դպրոցականի հոգեբանամանկավարժական բնութագիրը 10
ԳԼՈՒԽ 3 13
Անձի յուրահատկությունները միջանձնային հարաբերություններում 13
ԳԼՈՒԽ 4 16
Ուսումնական գործունեության առանձնահատկությունները 16
4.1 Ուսումնական գործունեության առանձնահատկությունները 16
4.2 Բանավեճերը դասապրոցեսում: 18
Եզրակացություն 19
Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մանկավարժական գործունեության ընթացքում ծագող խնդիրները՝ կապված սովորողների տարիքային հոգեբանության հետ: Աշխատանքը ներկայացված է երկու հիմնական ուղղություններով՝ դեռահասի և ավագ դպրոցի սովորողի մանկավարժահոգեբանական բնութագրմամբ:

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում 5-9-րդ դասարանների և ավագ դպրոցի՝ 10-12-րդ դասարանների աշակերտները:

Հետազոտական աշխատանքի գրության և մանկավարժական գործունեության ընթացքում ուղղորդվել եմ էապես տարբերվող տարիքային առանձնահատկությունների վերլուծությամբ: Կարևորել եմ մանկավարժ-հոգեբանների կարծիքները՝ կապված դեռահասների աչքի ընկնող որակներով, ինչպես նաև ավագ դպրոցականների հատկություններով՝ սեփական ֆիզիկական ուժի, բարետեսության, առողջության գիտակցմամբ:

Այս հետազոտական աշխատանքի նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ ժամանակակից մանկավարժությունը և հոգեբանությունը սերտորեն փոխկապակցված պետք է լուծեն ուսուցչի և սովորողի ուսումնառության ընթացքում ծագող խնդիրները՝ հաճախ նաև կիրառելով ՏՀՏ միջոցներ և ձևեր ռազմավարություն մշակելու համար:

ԳԼՈՒԽ 1

Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը

1.1 Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը

Դեռահասին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

- սեփական անձի հասունացումը նկատել տալու պահանջ.
- երկյուղ մանկական վարքագիծ դրսևորելուց.
- միայն հասուն մարդուն վայել գործով զբաղվելու տենչ.
- ցանկացած գործունեության մեջ մասնակից լինելու բուռն ցանկություն.
- անելանելի վիճակներում անգամ հաղթանակ տանելու բուռն ցանկություն.
- երազկոտության և ֆանտազիաներով տարվելու հակում.
- սեփական իրական /նաև մտացածին/ նկարագրի և որակների մասին պատմելու ցանկություն.
- ինչ-որ գործով զբաղվելու ցանկության արտահայտում.
- մարդկային հարաբերությունների մասին պատկերացումների ցուցադրական ներկայացում մեծահասակների վարքի քննարկման օրինակով:

Միջին դպրոցի սովորողն արդեն որակապես տարբերվում է տարրական դպրոցի աշակերտից: Կրտսեր դպրոցականը իր բնույթով խիստ տպավորվող և ներշնչվող է, զարգացած չէ նրա ինքնուրույնությունը: Դեռահասության տարիքում, ընդհակառակը, անձի ինքնուրույնությունը վառ դրսևորում է ձեռք բերում: Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սրանով նրանք ուզում են հատուկ ընդգծել և առիթ-անառիթ շեշտել, որ իրենք արդեն մեծ են, հասունացել են, այլևս երեխա չեն: Սա նրանց ամենախոցելի տեղն է և ամենագլխավոր նպատակադրումը:

Բացի դրանից՝ դեռահասի ամենանվիրական ցանկությունն այն է, որ մասնակից լինի մեծահասակների կյանքին և գործունեությանը: Իսկ դեպի մեծահասակ տանող ճանապարհն անցնում է հասուն մարդու կյանքի արտաքին կողմերի նմանակումով՝

արտաքին տեսք՝ հագուստ, արդուզարդ, պահվածք՝ զվարճություններ, խոսվածք: Արտաքին վարքի ընդօրինակումը հենց իրեն՝ դեռահասին է պետք: Նրան մեծ լինելու հավաստիքներ են պետք անձամբ իր համար, ինքն իր, ինչպես նաև շրջապատի աչքին մեծ երևալու համար: Այպիսի հասունացումը դեռ միայն նմանակում է:

Տեսնելով, որ մեծահասակների հասարակության մեջ դեռ տեղ չունի, դեռահասը իր տեղը որոնում է մանկական կոլեկտիվում, ընկերների հետ համագործակցության ձևով: Դպրոցում դեռահասի համար ամենակարևորը դառնում է ընկերների հետ հաղորդակցվելու ուրախությունը, գործում է անդավաճան ընկերության և հասկացված լինելու սկզբունքը:

Հաղորդակցական գործունեությունը շատ կարևոր է անհատականության ձևավորման համար: Այս գործունեության ընթացքում ձևավորվում է ինքնաճանաչողությունը: Ինքնազարգացման, ինքնաճանաչողության ձգտում և ընկերների հետ համագործակցություն. Սա հիմնական դպրոցի սանի գործունեության ամենաբնորոշ ձևերն են:

Այս տարիքին բնորոշ են հետևյալ կարևոր դրսևորումները /Լ. Ս. Վիգոտսկի/.

- *եսակենտրոն.* դեռահասի ուշադրությունը և հետաքրքրությունը բևեռվում են սեփական անձի վրա.
- *տարածական.* հետաքրքրությունը բևեռվում է նաև իրենից հեռու գտնվող, համամարդկային, հաճախ տիեզերական խնդիրների լուծումները որոնելու վրա. սրանք հաճախ հեշտ լուծելի են թվում, քան իր անձին վերաբերող կամ ընթացիկ խնդիրները.
- *ուժային.* սեփական կամքին հակառակ գրեթե ոչինչ չի անում, գործ չի ձեռնարկում.
- *ռոմանտիկայի*՝ անհայտի, համարձակ քայլերի, արկածների և հերոսության ձգտում:

Լ. Ս. Վիգոտսկին և Ժ. Պիաժեն հատուկ ուշադրություն են դարձրել դեռահասների մտածողության յուրահատկություններին: Այս տարիքում գլխավորը հասկացությունների ձևավորումը և դրանց տիրապետումն է: «Տեղի է ունենում իրականության, այլ մարդկանց և

ինքն իրեն հասկանալու բուռն ցանկություն. ահա թե ինչի է հանգեցնում հասկացություններով մտածելը»,- գրում է Վիգոտսկին [1]

Այս տարիքում կարևոր փոփոխություններ են տեղի ունենում նաև երևակայության ոլորտում: Վերացական մտածողության ազդեցությամբ երևակայությունն անցնում է ֆանտազիայի ոլորտ: Դեռահասի ֆանտազիան սովորաբար դեպի ներս է ուղղված և շրջապատողներից թաքնված է: Այդ է պատճառը, որ մտածողությունը անհատականացված և սուբյեկտիվ է: Դեռահասն իր ֆանտազիաները թաքցնում է որպես սրբազան գաղտնիք և առավել հաճույքով խոստովանում է իր վատ արարքները, քան բացահայտում է իր գաղտնիքները:

1.2. Ուսումնական գործունեության առանձնահատկությունները

Դեռահասի ուսումնական գործունեության մեջ դժվարություններ և հակասություններ են դրսևորվում, բայց նաև նկատվում են որոշակի առավելություններ, որոնց վրա էլ կարող է և պիտի հենվի մանկավարժը: Դեռահասի ամենամեծ արժանիքը ուսումնական բազմատեսակ գործընթացներին մասնակից լինելու պատրաստակամությունն է, քանի որ սրանով նա հենց ինքն իր աչքում է դառնում հասուն մարդ:

Բացի սրանից՝ դեռահասին հրապուրում է դասի ընթացքում ինքնուրույնություն դրսևորելու հնարավորությունը, ինչպես նաև դպրոցի պատերից դուրս ընդհանրապես ճանաչողական գործունեության ծավալումը: Սակայն դեռահասն իր պատրաստակամությունը չի կարողանում գործնականում կիրառել, քանի որ չի տիրապետում ուսումնական գործունեության բազմազան և նոր եղանակների:

Ուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության այդ նոր եղանակներն ու ձևերը և թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի: Մանկավարժը

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

մշտապես ականատես է, թե դեռահասն ինչ բուռն ոգևորություն է հանդես բերում ուսումնական նոր առարկայի հանդեպ, բայց նաև որքան արագ է նա հիասթափվում դրանից:

Հաճախ դեռահասը կորցնում է հետաքրքրությունը ուսման և ընդհանրապես դպրոցի հանդեպ. դրսևորվում է ներքին հեռացում դպրոցից (Ա. Ն. Լեոնտև): Հեռացումն արտահայտվում է նրանով, որ դպրոցը դադարում է նրա համար հոգևոր կենտրոն լինելուց: Սրա հիմնական պատճառն այն է, որ ուսումնական գործունեության ընթացքում չի բավարարվում սովորողի ինքնահաստատման պահանջը: Իսկ երբ սովորողները հասկանում են ուսումնառության գլխավոր դրդապատճառները, ապա կարողանում են ինքնուրույնաբար ուսումնական խնդիրներ որոշել, դրանց լուծման առավել իրատեսական ուղիներ ընտրել, հսկել և գնահատել սեփական աշխատանքը:

Դեռահասների ուսուցման արդյունավետության բարձրացման միջոցներից մեկը ուսումնական *դրդապատճառների* (մոտիվացիաների) նպատակաուղղված ձևավորումն է: Դրանք անմիջականորեն կապված են տարիքային խմբին հատուկ գերիշխող պահանջմունքների բավարարման հետ: Այդ պահանջմունքներից առաջինը *ճանաչողությունն* է, որի բավարարման արդյունքում ձևավորվում են կայուն հետաքրքրություններ և ուսումնական առարկաների նկատմամբ դրական վերաբերմունք: Դեռահասներին հրապուրում է գիտելիքները հարստացնելու, ընդարձակելու, ուսուցանվող երևույթների մեջ թափանցելու, դրանց պատճառահետևանքային կապերը բացահայտելու հնարավորությունը:

Դեռահասի մտավոր հասունությունը դրսևորվում է իսկապես ինչ-որ բան իմանալու և կարողանալու ձգտումով: Հենց այս բուռն ցանկությունն էլ խթանում է սանի ճանաչողական գործունեությունը, ընդգծում է նրա ինքնուրույն աշխատանքը: Ուսումը ձեռք է բերում անձնական իմաստ և վերաճում է ինքնակրթության: Այստեղ է, որ ուսուցիչը պիտի կարողանա ուսումնական գործունեությունը դարձնել «իմացական ուրախության» աղբյուր: *Հետազոտական գործունեությունը* նրանց մեծ բավականություն է պատճառում: Նրանք ուզում են *ինքնուրույնաբար* հասնել ինչ-որ բանի, գյուտեր և բացահայտումներ անել: Ճանաչողական պահանջմունքները չբավարարելու դեպքում դեռահասների մոտ նկատվում են ձանձրույթի, ընկճվածության, անտարբերության դրսևորումներ, իսկ երբեմն էլ

բացասական վերաբերմունք ընդհանրապես ուսման կամ անհետաքրքիր առարկաների հանդեպ: Ընդ որում՝ նրանց համար հավասարապես կարևոր են ինչպես ուսումնական նյութի բովանդակությունը, այնպես էլ այդ նյութից գիտելիք քաղելու գործընթացը, միջոցները, եղանակները: Հետաքրքիր են այն դասերը, որոնց ընթացքում սովորողները գիտելիք են ձեռք բերում ոչ միայն դասագրքից, այլև օժանդակ ուրիշ միջոցներից; Իսկ եթե գիտելիքի միակ աղբյուրը դասագրքում գրվածն է, ապա սա դառնում է անհետաքրքիր և միօրինակ: Սովորողի և մեծահասակի միջև կարելի է ստեղծել անմիջական պայմաններ: Այդ հարցում խիստ կարևորվում է ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպմանն աջակցող մասնագետների՝ ուսուցիչների, նրանց օգնականների վերապատրաստումները, ծնողների համար ուսուցողական դասընթացների կազմակերպումը: [2]

Ճանաչողական հետաքրքրությունների հետ միասին դրական վերաբերմունք կարող է ծնել գիտելիքի ձեռքբերման անհրաժեշտությունը: Դեռահասի համար շատ կարևոր է հասկանալ և իմաստավորել դրանց կենսական նշանակությունը, ինչպես նաև իր անձի զարգացման հարցում ունեցած կարևորությունը: Սա ժամանակակից դեռահասի ինքնագիտակցության զարգացման մասին է վկայում: Շատ առարկաներ նրան դուր են գալիս այն բանի շնորհիվ, որ հնարավորություն են ընձեռում ոչ միայն շատ բան գիտենալ, այլև շատ բան կարողանալ, լինել բարեկիրթ, բազմակողմանիորեն զարգացած մարդ: Պետք է քաջալերել դեռահասին և ամրապնդել այն մտայնությունը, թե կրթված և ուսյալ մարդը իսկապես մեծ օգուտ կարող է բերել հասարակությանը: Համոզմունքները և հետաքրքրությունները մեկտեղվելով՝ ստեղծում են հուզական երանգավորում ունեցող մթնոլորտ, որն էլ հնարավորություն է տալիս գործուն մասնակցություն ունենալու ուսումնառության գործընթացին: եթե դեռահասը գիտելիքի կենսական նշանակությունը չի նկատում և չի ընկալում, կարող են ձևավորվել բացասական համոզմունքներ, հետևաբար նաև բացասական վերաբերմունք ուսումնական առարկաների հանդեպ: Օրինակ՝ որոշ աշակերտներ քերականության նյութը չեն սովորում, քանի որ համարում են, որ իրենք

[2] . https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108854

առանց լեզվական գիտելիքների էլ գրագետ են գրում: Ուսման նկատմամբ դրսևորվող բացասական վերաբերմունքը պայմանավորված է նաև որոշակի առարկաների ուսումնասիրության ընթացքում գրանցվող սեփական անհաջողություններով: Անհաջողությունը ծնում է բացասական հույզեր, ինչպես նաև խրթին առաջադրանքի կատարումից հրաժարում: Իսկ եթե անհաջողությունը շարունակական է դառնում, ապա դեռահասը բացասաբար է վերաբերվում կամ էլ ուղղակի մերժում է տվյալ առարկան:

Դեռահասի դրական հուզական ուղղվածությունը պայմանավորված է մեծահասակների գնահատականով, որով չափում են նրա ուսումնական գործունեությունը: Գնահատումը մի քանի կողմ ունի: Մի դեպքում սա հնարավորություն է տալիս դեռահասին կատարելու իր պարտականությունը, արժանապատիվ տեղ գրավելու դասընկերների շարքում, մյուս կողմից էլ արժանանալու ուսուցիչների և ծնողների հարգանքին: Իսկ հաճախ էլ բարձր գնահատականը խթանում է ուսումնական գործընթացում հաջողությունների հասնելու ձգտումը և դրանով իսկ որոշակի վստահություն ձեռք բերելու սեփական մտավոր կարողությունների և հնարավորությունների առումով: Սա պայմանավորված է սեփական անհատականությունը գիտակցելու, իր անձի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու այս տարիքին հատուկ գլխավոր պահանջմունքի հետ: Այդ է պատճառը, որ դեռահասի համար խիստ կարևոր է ինչպես սեփական անձին տված ուրիշների *գնահատականը,* այնպես էլ *ինքնագնահատումը:*

Դեռահասի դրական հուզականության ձևավորման համար շատ կարևոր է, որ ուրիշների տված գնահատականը համապատասխանի ինքնագնահատականին: Սա հզոր դրդապատճառ է. արտաքին գնահատումը և ինքնագնահատումը գործում են միևնույն ուղղությամբ և ուժեղացնում են մեկմեկու: Հակառակ դեպքում կարող են ծագել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հակասություններ: Ուսուցիչը պիտի իմանա, թե ինչ պայմաններ են պետք դրդապատճառների ձևավորման համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահասի՝ ուսման նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը նախ և առաջ պայմանավորված է ուսուցչի աշխատանքի որակով և սովորողների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով:

ԳԼՈՒԽ 2

Ավագ դպրոցականի հոգեբանամանկավարժական բնութագիրը

Դպրոցական ավագ տարիքը (15-18 տարեկան) ֆիզիկական հասունացման սկզբնական շրջանն է և սեռական հասունացման ավարտը: Այս տարիքում արդեն կանոնավորվում են մարմնի մասերը, այլևս չեն նկատվում վաղ դեռահասությանը հատուկ մարմնի մասերի աններդաշնակությունը, ինչպես նաև դեռահասին հատուկ անճարակ շարժուձևը: Հաճախ այս տարիքում էլ կարող են դրսևորվել որոշակի շեղումներ կամ ընդհակառակը, հաղթահարվեն առողջական և հոգեբանական շեղումները: Այդ նպատակով էլ մանկավարժին օժանդակում է մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը, որի հիմնական նպատակը իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է:[3]

Զարգանում է մկանային համակարգը: Շարունակում է զարգանալ ուղեղը, հետևաբար ավագ դպրոցականն արդեն պատրաստ է ֆիզիկական և մտավոր որոշակի ծանրաբեռնվածություն կրելու: Ֆիզիկական զարգացումը հնարավորություն է ընձեռում իրեն դրսևորելու աշխատանքի, սպորտի ասպարեզներում, ինչպես նաև մասնագիտական ընտրություն կատարելու համար:

Սեփական ֆիզիկական ուժի, բարետեսության, առողջության գիտակցումը ձևավորում է բարձր ինքնագնահատական, ինքնավստահություն և կենսասիրություն:

Կամ էլ ընդհակառակը, զգալով սեփական ֆիզիկական թերությունները, նրանք դառնում են ինքնամփոփ, անվստահ և հոռետես:

Սակայն սեռական հասունացումը դեռևս չի հանգեցնում սոցիալական հասունացման: Պատանեկության շրջանը անցումային փուլ է ֆիզիկական հասունությունից դեպի սոցիալական հասունություն տանող ճանապարհին: Այս փուլում պատանեկությանը

[3] . https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126671

հիմնականում մտահոգում է մեծահասակների հասարակության մեջ մուտք գործելու, հասարակության մեջ գործող օրենքներն ու կանոնները յուրացնելու խնդիրը:

Ավագ դպրոցականը ոտք է դնում ինքնուրույն կյանքի շեմին: Սա սոցիալական զարգացման բոլորովին նոր իրավիճակ է ստեղծում: Պատանին ինքնորոշման, կյանքի սեփական ուղին ընտրելու խնդրի լուծումը համարում է այդ պահին իր համար կենսականորեն հրատապ խնդիր: Մասնագիտական ընտրությունը դառնում է իրադրության հոգեբանական զարգացման կենտրոն, որը ստեղծում է որոշակի ներքին դիրքորոշում: Սոցիալական նոր դիրքորոշումը պատանու համար փոխում է վերաբերմունքը նաև ուսման, դրա դերի, նշանակության, խնդիրների և բովանդակության հանդեպ: Ավագ դպրոցականը ուսումնական գործընթացը գնահատում է սեփական ապագայի դիրքորոշումից ելնելով. ի՞նչ է տալու այսօրվա սովորածը վաղվա կյանքի համար:

Ավագ դպրոցում բավական ամուր կապեր են հաստատվում մասնագիտական և ուսումնական հետաքրքրությունների միջև: Եթե դեռահասի ուսումնական հետաքրքրություններն են հիմք դառնում տվյալ մասնագիտության ընտրության համար, ապա ավագ դպրոցականի մոտ նկատվում է հակառակ երևույթը. մասնագիտության ընտրությունը ձևավորում է ուսումնական հետաքրքրություններ: Սովորողներն սկսում են հետաքրքրվել և լրջորեն զբաղվել այն առարկայով կամ առարկաներով, որոնք կապված են իր ընտրած մասնագիտության հետ:

Մասնագիտության ընտրությունն օժանդակում է ուսումնական գործունեության հանդեպ վերաբերմունքի փոփոխությանը: Այս ամենը բարենպաստ հող է ստեղծում ապագա մասնագիտության հոգեբանական բնութագրին ծանոթանալու առումով, այսինքն՝ նկատի են առնվում այն պահանջները, որոնք ներկայացվում են ուշադրությանը, դիտողականությանը, մտածողությանը, կամքին, բնավորությանը և այս կամ այն մասնագիտության ներկայացուցչի հոգեբանական այլ առանձնահատկություններին:

Ավագ դպրոցականի համար ուսումը անհրաժեշտ հիմք է դառնում ապագա մասնագիտական գործունեության կառուցման համար: Հատուկ հետաքրքրության են արժանանում այն առարկաները, որոնք կարևոր են ընտրած մասնագիտական ոլորտում: Ավագ դպրոցականն իր առջև խնդիր է դնում ուսումնասիրել և առաջադիմել այդ

առարկաներից: Ավագ դպրոցականի կամ պատանեկան շրջանի նորագոյացություններն են մասնագիտական և անձնական ինքնակողմնորոշումը: Բարձրդասարանցին որոշում է, թե ինչ է անելու ապագայում:

Հոգեբան-մանկավարժները նշում են, որ մասնագիտական կողմնորոշումը՝ որպես հոգեբանական բարդ հիմնախնդիր, պիտի կապվի նրանց կենսական առաջընթացին և արժեքային ընտրությանը: Շատ կարևոր է պատանիներին և աղջիկներին ծանոթացնել կոնկրետ օրինակների՝ մասնագիտության ընտրության հաջող կամ անհաջող դեպքերի: Նրանց պիտի ծանոթացնել տվյալ մասնագիտության աշխատանքային պայմաններին և նկատի ունենալ, որ պատանիների համար կարևոր է բարձր վարձատրությունը, իսկ աղջիկներին առավել հետաքրքրում են աշխատանքային բարվոք պայմանները:

Դպրոցականները, անկախ գիտելիքների աստիճանից, հատուկ մասնագիտական տեղեկատվության և խորհրդատվության կարիք ունեն. Սա պիտի միշտ իր աչքի առաջ ունենա ավագ դպրոցում աշխատող ուսուցիչը: Համընդհանուր ներառականության պայմաններում այժմեական է Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքը: Կենտրոնի գործունեության հիմնական խնդիրը սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների կրթության աջակցության ծառայությունների իրականացումը, ծառայությունների մատչելիությունը և արդյունավետությունը համակարգելն ու վերահսկելն է, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելը: [4]

[4]. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126671

ԳԼՈՒԽ 3

Անձի յուրահատկությունները միջանձնային հարաբերություններում

Եթե դեռահասները իրենց ինքնուրույնությունը դրսևորում են որոշակի քայլերի և արարքների ձևով, ապա ավագ դպրոցականի ինքնուրույնությունը առավել ի հայտ է գալիս սեփական տեսակետների, գնահատականների, կարծիքի տեսքով: «Ոչ ոք չի կարող իմ վզին փաթաթել սեփական տեսակետը կամ կարծիքը. Ես ունեմ իմ համոզմունքները, և ես կարող եմ դրանք պաշտպանել և վիճաբանել հանուն դրանց»,- սա ավագ դպրոցականի նշանաբանն է:

Ավագ դպրոցականի ինքնուրույնությունը կյանքի առավել պատասխանատու ոլորտներում է դրսևորվում, քան դեռահասներինը: Բարձրդասարանցին ուզում է ինքնուրույն ընտրել հետաքրքիր մասնագիտություն և դառնալ իր գործի վարպետը: Բացի սրանցից՝ ավագ դպրոցականն ուզում է ինքնուրույն գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները: Ինքնուրույնաբար ամեն ինչ հաղթահարելու ձգտումը նպաստում է բարոյական հայացքների և համոզմունքների ձևավորմանը: Սակայն միշտ չէ, որ այդ համոզմունքները հասուն կամ ճիշտ հայացքներ են. Հաճախ կարելի է բախվել թյուր և ոչ հասուն դատողությունների:

Ավագ դպրոցականը չի ձգտում սոսկ, որ իրեն համարեն մեծահասակ. նա ընդգծում է, որ իրեն որպես մեծահասակ ընդունեն, կարևորեն իր յուրօրինակությունը և անհատականությունը: Ահա այստեղից էլ ծնունդ է առնում ցանկացած ճանապարհով ուշադրության արժանանալու միտումը. Հաճախ ավագ դպրոցականը ցուցադրաբար հրապուրվում է այնպիսի բաներով, որոնք քննադատում են մեծահասակները: Ինքնուրույնության ընդգծումը, սակայն, չի բացառում մեծահասակների հետ հաղորդակցվելու և շփվելու ձգտումը: Այս պահանջը բարձրդասարանցու մոտ առավել ընդգծված է, քան տարիքային որևէ այլ խմբի: Կրտսեր դպրոցականը հասակակիցների հետ շփվելու մղում ունի, սակայն նրա համար առավել կարևոր են ուսուցիչների և ծնողների հետ շփումները և բարեկամական կապերը: Նրանք հենց ուսուցիչների և ծնողների աչքերով են

նայում ընկերներին և համադասարանցիներին: Դեռահասների համար առաջին տեղում հասակակիցների հետ ընկերությունն է:

Իսկ պատանեկության տարիքում պատկերն էապես փոխվում է. բարձրդասարանցիների մեծ մասն ընդգծում է մեծահասակների հետ շփվելու անհրաժեշտությունը: Այսպիսի պահանջը հավանաբր պայմանավորված է այս տարիքին հատուկ ինքնաճանաչման և ինքնորոշման հիմնախնդիրներով, որոնք շատ հաճախ դժվար է լինում ինքնուրույնաբար լուծել: Այս հիմնախնդիրները քննարկվում են հասակակիցների հետ, սակայն կենսափորձի պակասն իրեն զգալ է տալիս: Այստեղ է, որ օգնության ձեռք են մեկնում մեծահասակները: Սակայն բարձրդասարանցիները հենց ընկերների հետ են նախընտրում անցկացնել իրենց ազատ ժամանակը, նրանց պատմում են սեփական անհանգստությունների, տանջող մտքերի, սիրած զբաղմունքի մասին:

Տվյալներ կան, որ պատանիների սիրելի զբաղմունքը ընկերների հետ ժամանակ անցկացնելն է, ավելի քիչ ժամանակ նրանք տրամադրում են ծնողներին, իսկ առավել հազվադեպ՝ ուսուցիչներին: Դասարանական կոլեկտիվի կարծիքը կարևորում և թանկ է գնահատում պատանիների կեսը, իսկ ուսուցիչների կարծիքը՝ միայն նրանց մեկ երրորդը:

Այս տարիքում արագ զարգանում են այնպիսի անհատական որակներ, ինչպիսիք են ինքնագիտակցումը և ինքնագնահատումը: Եթե կրտսեր դպրոցականը իր գործունեոքության որակի և սեփական անձի գնահատումն ակնկալում է լսել ուսուցչից, ապա դեռահասը ձգտում է ունենալ սեփական գնահատականը և սեփական կարծիքը: Կրտսեր տարիքում ինքնագնահատումը անկայուն է, իսկ դեռահասի մոտ համեմատաբար կայուն բնույթ ունի: Դեռահասի վարքը և գործունեությունը մեծ մասամբ բնորոշվում են ինքնագնահատման առանձնահատկություններով: Այսպես՝ բարձր ինքնագնահատակի դեպքում հաճախ ծագում են կոնֆլիկտային իրավիճակներ շրջապատող մարդկանց հետ: Ինքնագնահատման շնորհիվ դեռահասը ձգտում է ինքնադաստիարակության: Գնահատելով սեփական կարողությունները և հնարավորությունները և դրանք համեմատելով ուրիշների հետ՝ նա կարող է կազմել ինքնադաստիարակության յուրահատուկ ծրագիր:

Իսկ ավագ դպրոցականի բնորոշ առանձնահատկությունը նրա ինքնագիտակցության աճն է: Ինքնագիտակցության աստիճանը պայմանավորում է բարձրդասարանցիների վերաբերմունքը ինչպես սեփական անձի, այնպես էլ շրջապատող մարդկանց հանդեպ: Նրանք քննադատական վերաբերմունք են դրսևորում թե՛ ուրիշների, թե՛ սեփական անձի հանդեպ, խիստ պահանջներ են ներկայացնում մեծահասակների և հասակակիցների բարոյական նկարագրի առումով:

Ինքնագնահատման ժամանակ նրանք դրսևորում են որոշակի զգուշավորություն և հաճույքով խոսում են սեփական թերությունների, քան բարեմասնությունների մասին: Ե՛վ պատանիները և՛ աղջիկները նշում են իրենց դյուրաբորբոքությունը, կոպտությունը, եսասիրությունը: Դրական բնութագրումներում կարելի է լսել, որ իրենք ընկերության մեջ հավատարիմ են, օգնում են մարդկանց նեղության և դժբախտության ժամանակ: Այսինքն կարևորում են այն գծերը, որոնք անհրաժեշտ են հասակակիցների հետ հարաբերություններ հաստատելու համար կամ էլ այնպիսիք, որոնք խանգարում են այդօրինակ շփումների ժամանակ (դյուրաբորբոքությունը, կոպտությունը, եսասիրությունը):

Բարձր ինքնագնահատումը դրսևորվում է նաև մտավոր ունակություններն արժևորելու առումով: Նա, ով հեշտությամբ է հաղթահարում ուսումնական դժվարությունները, մտածում է, որ ցանկացած մտավոր աշխատանքի ընթացքում կարող է դրության տերը լինել: Նա, ով որևէ առարկայից հաջողություններ է գրանցում, պատրաստ է հավատալու, որ օժտված է որոշակի տաղանդով, նույնիսկ թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները նշում են իրենց այս կամ այն ձեռքբերումը: Բարձր ինքնագնահատումը ավագ դպրոցականին մղում է ինքնադաստիարակության և ինքնակատարելագործման:

ԳԼՈՒԽ 4

Ուսումնական գործունեության առանձնահատկությունները

4.1 Ուսումնական գործունեության առանձնահատկությունները

Ավագ դպրոցականները, ի տարբերություն դեռահասների, առավել հետաքրքրություն են դրսևորում ուսումնական առարկաների, ընդհանրապես ուսումնառության հանդեպ: Սա պայմանավորված է ուսման նկատմամբ նոր դրդապատճառների ձևավորմամբ: Գլխավորը նրանց համար ինքնակողմնորոշումն է և ինքնուրույն կյանքի նախապատրաստումը: Այս դրդապատճառները անհատական իմաստ են ձեռք բերում և գործուն են դառնում: Առավել ընդգծվում են սոցիալական այնպիսի դրդապատճառները, ինչպիսիք են հասարակության լիիրավ անդամ դառնալու, մարդկանց, հայրենիքին օգտակար լինելու միտումները, ինչպես նաև գիտության՝ հասարակության համար գործնական դեր ունենալու համոզմունքը: Իմաստազուրկ չեն նաև ինքնուրույն գործունեությունը, ուսումնառության բովանդակության և գործընթացի հանդեպ ավելի վաղ ձևավորված հետաքրքրությունները:

Փաստերի հանդեպ դրսևորած հետաքրքրության հետ միասին, որը, ի դեպ, հատուկ է նաև դեռահասներին, ավագ դպրոցականի մոտ ձևավորվում է որոշակի հետաքրքրություն նաև տեսական հիմնախնդիրների, գիտական ուսումնասիրության մեթոդների հանդեպ: Բացի դրանից՝ ավագ դպրոցականի համար կարևոր է դառնում բարդ, դրանց թվում նաև ձեռնարկչական /կոմերցիոն/ խնդիրների լուծումը, ինքնուրույն որոնողական-հետազոտական աշխատանքով զբաղվելու միտումը:

Այսպիսի ճանաչողական դրդապատճառը կարող է տարածվել կամ բոլոր առարկաների կամ առարկաների որոշակի խմբի կամ առանձին որևէ առարկայի վրա: Ճանաչողական հետաքրքրությունների նախընտրումը պայմանավորված է ապագա կյանքի պլաններով, մասնագիտական նպատակադրումներով, որոնք իրենց հերթին ձևավորում են ուսումնական հետաքրքրություններ, փոխում են վերաբերմունքը ուսումնական գործընթացի հանդեպ:

Այսպիսով՝ ավագ դպրոցականի դրդապատճառային ոլորտի ձևավորման համար բնութագրական են սոցիալական և ճանաչողական շարժառիթների համակցությունը և փոխներթափանցումը, որը դրսևորվում է հենց ուսումնական գործընթացի մեջ: Ավագ դպրոցական տարիքում առաջին պլան են մղվում ազատակամության և ինքնակամության դրդապատճառները, այսինքն՝ ավելի ու ավելի հաճախ է սովորողն առաջնորդվում գիտակցաբար առաջադրված նպատակով և իր սեփական մտադրություններով:

Նրանք ավելի ճիշտ են իմաստավորում իրենց վերաբերմունքը ուսման հանդեպ: Սուր ինքնաքննադատության շնորհիվ նրանք, վերլուծելով այն պատճառները, որոնք խանգարում են ուսումնական գործընթացին, մատնացույց են անում սեփական բնավորության բացասական դրսևորումները, ինչպիսիք են կամազրկությունը, ծուլությունը, ժամանակի ճիշտ բաշխման անկարողությունը, ինքնավերահսկողության բացակայությունը և տրամադրության փոփոխականությունը:

Դպրոցի հանդեպ վերաբերմունքը երկակի է. մի կողմից՝ բնութագրական է ուսման նկատմամբ գիտակցված մոտեցումը, մյուս կողմից՝ դպրոցից շուտափույթ ազատագրվելու ցանկությունը: Ուսումը, գիտելիքների ձեռքբերումը ամենից առաջ դառնում են ապագա ինքնուրույն գործունեությանը նախապատրաստվելու միջոցներ: Սակայն սխալ է մտածել, թե բոլոր բարձրդասարանցիների մոտ նկատվում են վերոհիշյալ դրսևորումները:

Ավագ դպրոցականի ներքին դիրքորոշումը դպրոցի հանդեպ պայմանավորված է մի շարք գործոններով.

- որոշակի վերաբերմունք դպրոցի՝ որպես կրթական հաստատության հանդեպ.
- որոշակի վերաբերմունք ուսման և գիտելիքների ձեռքբերման գործընթացիւ հանդեպ.
- որոշակի վերաբերմունք ուսուցիչների հանդեպ.
- որոշակի վերաբերմունք համադասարանցիների հանդեպ

Դեռահասների և ավագ դպրոցական տարիքի սովորողների ճանաչողական գործունեության որակական տարբերությունն այն է, որ եթե դեռահասն ուզում է իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում այս կամ այն երևույթը, ապա ավագ դպրոցականը քննում է տվյալ հարցի շուրջ գոյություն ունեցող տարբեր տեսակետներ և կազմում է սեփական

եզրահանգումը: Նրանք շարունակ ձգտում են բացահայտելու ճշմարտությունը: Նրանց համար խիստ ձանձրալի է, երբ միտք շարժող հետաքրքիր հարցադրումներ չկան:

4.2 Բանավեճերը դասապրոցեսում:

Բանավեճերի ընթացքում ավագ դպրոցականը հանդես է գալիս շատ համարձակ համեմատություններով, ընդհանրացումներով, ծնվում են ինքնատիպ գաղափարներ: Սա կարելի է բացատրել պատրաստի կաղապարների բացակայությամբ, մտքի աշխատանքի նորարարությամբ: Ավագ դպրոցականների զրույցների և քննարկումների թեմա հաճախ դառնում են բարոյական և էթիկական հիմնախնդիրները: Նրանք սոսկ չեն սիրահարվում կամ մտերմություն անում, այլ անպայման ուզում են իմանալ, թե ի՛նչ է բարեկամությունը, ի՛նչ է սերը:

Բանավեճը ոչ միայն ճանաչողության, այլև նախ և առաջ ինքնաարտահայտման և համոզմունքների ձևավորման պայման է: Մտքի, տեսակետների ինքնուրույնությունը ձևավորվում է սեփական տեսակետի շարադրման ընթացքում: Բանավեճը, սակայն, չի բացառում ուսուցչի՝ մտածել տվող բացատրությունը:

Ավագ դպրոցականների ճանաչողական գործունեության բնութագիրը ցույց է տալիս, որ նրանք պատրաստ են թափանցելու երևույթների էության մեջ, բացահայտելու պատճառները և եզրահանգումներ կատարելու: Սա առարկայի, երևույթի հանդեպ հետազոտական վերաբերմունքի դրսևորումն է: Նրանց ուսումնառության գործընթացը միշտ պիտի նկատի առնվի այն դիրքորոշումից, թե որքանով է սովորողը պատրաստ ինքնակրթության: Եթե կրտսեր դպրոցում հիմնական նպատակը սովորել սովորեցնելն էր, դեռահասության տարիքում ծանոթանում են ինքնակրթության տեխնիկային, ավագ դպրոցում՝ ինքնուրույնաբար սովորելու, ուսումնական նյութով աշխատելու, դրանից օգտվելու ռացիոնալ եղանակների (կոնսպեկտավորում, տեղեկատվական գրականությունից օգտվելու կարողություն, գրքով աշխատանք) յուրացումն է: Շատ կարևոր է բարձր դասարանցիներին սովորեցնել պլանավորել սեփական աշխատանքը, կազմել օրվա ռեժիմ, նպատակահարմար ձևով և ճիշտ օգտագործել ժամանակը՝ հաշվի առնելով արդի կենսական-հասարակական, ինչպես նաև անհատական պահանջները:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի գրության ընթացքում հանգել եմ կարևորագույն մի քանի եզրակացության.

1. Դեռահասների դրական հուզական ուղղվածությունը պայմանավորված է մեծահասակների գնահատականով:
2. Պատանիների սիրելի զբաղմունքը ընկերների հետ ժամանակ անցկացնելն է, ավելի քիչ ժամանակ նրանք տրամադրում են ծնողներին, իսկ առավել հազվադեպ՝ ուսուցիչներին:
3. Ավագ դպրոցականների վերաբերմունքը երկակի է. մի կողմից՝ բնութագրական է ուսման նկատմամբ գիտակցված մոտեցումը, մյուս կողմից՝ դպրոցից շուտափույթ ազատագրվելու ցանկությունը:
4. Ինքնաբնութագրման պահանջը ավագ դպրոցականին ստիպում է կանոնավորել և ընդհանրացնել ինքն իր մասին ունեցած գիտելիքները:

Այսպիսով, դեռահասի և ավագ դպրոցականի մոտ կենտրոնական է դառնում անձի բարոյական զարգացման յուրահատկությունը, իսկ ավելի ճիշտ՝ արժեքային պատկերացումների վերանայումը: Երկարատև տագնապներից, ներքին պայքարից, բացահայտ ըմբոստացումներից հետո վերջապես ընդունում է դեռևս մանկությունից, ծնողներից, շրջապատից ձեռք բերած արժեքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նալչաղյան Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Երևան, Լույս, 1991
2. Белкин А. С., Основы возрастной педагогики, М., Академия, 2000,192 с.
3. Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М., Возрастная и педагогическая психология, М.: Педагогическое общество России, 2003. 512 с.
4. Обухова Л.,Ф., Детская (возрастная) психология, М., РПА, 1996, 374 с.
5. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
6. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108854
7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126671